

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բնագրում բաց թողած տառերը.*

Տաք միջ__րե էր. շուրջը տարածվել էին հաճելի բույրեր, թրթ__ուն գույներ, որոնց մեջ իշխում էր դեղնակարմիրը: Սաղարթախիտ անտառի և ոսկեղեն արտերի վրա իջել էր անդո__ավետ թախծություն: Սիմինդրի գմբու__տյա տեր__ները քսվում էին միմ__անց և քա__ցրահնչյուն խշխշոց ար__ակում: Արեգակի տակ թախծոտ ժպտում էր արևածաղիկը և օր__րում դեղին գլխիկը: Քամին մեղմիկ տարուբերում էր որ__ատունների հյութեղ ողկույզները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

ուս (ուսի), հյուսիս (արևմտյան), դեմ (դիմաց), ռուս (հայկական), ի (գիտություն), գլուխ (գործոց), ճյուղից (ճյուղ), տարեց (տարի), ուշ (ուշ), աշխարհե (աշխարհ).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ.*

<i>երկիր</i>	<i>մարտ</i>
<i>ժպիտ</i>	<i>գունդ</i>
<i>ըմբիշ</i>	<i>էրես</i>
<i>ծառ</i>	<i>նվեր</i>
<i>ազգ</i>	<i>տունկ</i>

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան բառերով կազմել անանցավոր բառեր.*

դժ	ճաշ
դեր	խումբ
ենթ	անուն
ստոր	դաս
ընդ	առաջ
նախ	բախտ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը.

ականջը գցել	կողմնորոշվել
աչքը ջուր կտրել	հաղորդել, հայտնել
գլուխ հանել	ապստամբել, ըմբոստանալ
ոտքի ելնել	տանջել, չարչարել
հոգին հանել	մեկին երկար սպասել

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6.Առաջին շարքի արմատներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր.

որդի	ենի
ծով	ական
հուր	իչ
դեղձ	ային
գիր	եղեն

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ընդգծել այն բառը կամ բառակապակցությունը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը.

ա/ (փիղ) – անտաշ, կատաղի, անկուշտ, հսկա

բ/ (օձ) – ստորաքարշ, վայրենի, նենգ, հնարամիտ

գ/ (բազե) – պորտաբույծ, երես առած, խիզախ օղաչու, անբան

դ/ (թութակ) – անխելք, ուրիշի խոսափող, պճնամուլ, շատախոս

ե/ (աղվես) – արագաշարժ, խորամանկ, անհամակրելի, լեզվանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Կապակցությունների իմաստ արտահայտել մեկ բառով.

ա/ Երեք նիշ ունեցող _____

բ/ Երգիչների խումբ _____

գ/ Գլուխների քանակ _____

դ/ Ամեն տեղով գնացող _____

ե/ Միջին դարերին պատկանող _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր.

ա/ Ոչ հաստ _____

Որսի շուն _____

բ/ Ձող կամ փայտ, որի վրա թառում են ընտանի թռչունները _____

Արևելյան երաժշտական գործիք _____

գ/ կռիվ _____

ամիս _____

դ/ Ձեռք, դաստակ _____

Ճակնդեղ _____

ե/ Տղամարդ _____

Քարանձավ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Տեղադրել *միօրինակ, բնօրինակ, տարօրինակ, յուրօրինակ, անօրինակ* բառերը.

1. Ֆիդայիների _____ սխրանքները հայրենասիրության հրաշալի դասեր են:

2. Բոլոր խելացի մարդիկ մի քիչ _____ են:

3. Թանգարանում ցուցադրված են _____ աշխատանքներ:

4. Նրա _____ խոսքը ձանձրացրեց ունկնդիրներին:

5. Նկարչի կտավների _____ գավակները հանձնեցին թանգարանին:

